

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/3

23 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Մհեր Գևորգյան Ա/Ձ-ի ներկայացուցչի 23.08.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 04.08.2014 թ-ի թիվ 6102271 ստուգման ակտի դեմ:

Մհեր Գևորգյան Ա/Ձ-ի ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.

Ա/թ հուլիս ամսին Աբովյանի հարկային տեսչության Բյուրեղավան քաղաքը սպասարկող տեսուչները խախտելով օրենսդրությունը Մհեր Գևորգյան Ա/Ձ-ում (ՀՎՀՀ 43066986) անցկացրել են ստուգում, որի արդյունքում կազմել են արձանագրություն՝ իբր չի խբվել գնված ապրանքի հսկիչ-դրամարկղային կտրոնը: Երբ իրենցից պահանջվել է ներկայացնել համապատասխան հանձնարարականը, նրանք հրաժարվել են տրամադրել կամ ցույց տալ համապատասխան փաստաթուղթը և պնդել են, որ համապատասխան արձանագրությունը ստորագրելուց հետո միայն կտրամադրեն այն: Այդ ընթացքում 2-րդ տեսուչը հսկիչ- դրամարկղային մեքենայով կատարել է գործողություն:

Ըստ գանգատի, գնում կատարող երրորդ անձը, որին իբր թե չի տրամադրվել հսկիչ-դրամարկղային կտրոն, չի ներկայացել:

Այնուհետև ս/թ օգոստոսի 21-ին գանգահարել է հարկային տեսչության իրավաբանը և հրավիրել է հարկային տեսչություն՝ վարչական տուգանքի չափը որոշելու համար: Ներկայանալով իրավաբանին գանգատաբերը պահանջել և պնդել է, որ իրեն տրամադրվի կամ ցույց տրվի համապատասխան հանձնարարականը և հիմքերը, սակայն իրավաբանը հրաժարվել է և խորհուրդ է տվել դիմել տարածքը սպասարկող տեսուչին:

Աբովյանի հարկային տեսչության տեսուչների անօրինական գործողությունների արդյունքում կազմված արձանագրությամբ պարզվել է, որ Մհեր Գևորգյան Ա/Ձ-ին տուգանել են 150.000 դրամի չափով:

Միաժամանակ գանգատաբերը տեղեկացնում է, որ այդ ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պատշաճ ձևով, իրեն չեն տեղեկացրել: Նշված փաստերի վերաբերյալ գանգահարել և տեղեկացրել է նաև թեժ գիծ:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է կանխել Աբովյանի հարկային տեսչության կողմից կատարված անօրինական գործողությունը և վարչական ակտը չեղյալ համարել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Կոտայքի ՏՀՏ պետի 07.07.2014 թ-ի թիվ 6201892 հանձնարարագրի Ա/Ձ Մհեր Գևորգյանի մոտ իրականացվել է

հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 11.07.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6201892 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

համաձայն Կոտայքի ՏՀՏ պետի 07.07.2014 թ-ի թիվ 6201892 հանձնարարագրի Կոտայքի մարզ, ք.Բյուրեղավան, Վ.Սարգսյան 11/45 հասցեում գտնվող՝ Մհեր Գևորգյան Ա/Ձ-ին պատկանող խանութից հարկային տեսուչ Աշոտ Վարդանյանի կողմից 10.07.2014 թ-ին, ժամը 19:40-ին կատարվել է հսկիչ գնում: Գնվել է մեկ հաբ «Խիտրա» տեսակի դեղ 350 դրամ արժեքով և մեկ սրվակ կանաչ վալերյանայի հատիկներ 350 դրամ արժողությամբ, ընդամենը 700 դրամ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վաճառող Մայիս Գևորգյանի կողմից կատարված վճարման գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողները ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 19:43-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվությունը 2740 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը ժամը 19:44-ին մուտքագրվել է ՀԴՄ, որից հետո ժամը 19:44-ին ՀԴՄ-ից կատարվել է վերադարձ՝ գումարով 700 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի կողմից 23.07.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6102271 հանձնարարագիրը, որի համաձայն Մհեր Գևորգյան Ա/Ձ-ի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 04.08.2014 թ-ի թիվ 6102271 ստուգման ակտը, որով ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտելու համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Հսկիչ գնումն իրականացրած անձինք նշեցին, որ հսկիչ գնումը կատարելու պահին Մհեր Գևորգյան Ա/Ձ-ի ներկայացուցիչ Արսեն Գևորգյանը, որը հանդիսանում է Մհեր Գևորգյան Ա/Ձ-ի եղբայրը, ներկա չի եղել: Արսեն Գևորգյանը ներկայացել է որոշ ժամանակ անց, որին հսկիչ գնումն իրականացրած անձինք տեղեկացրել են կատարված խախտման վերաբերյալ: Սակայն, Արսեն Գևորգյանը չի համաձայնվել՝ նշելով, որ նման գնում չի կատարվել: Հաջորդ օրը Արսեն Գևորգյանը ներկայացել է հարկային տեսչություն, որտեղ նրան կրկին անգամ ներկայացվել են նախորդ օրը կատարված խախտման մանրամասները և առաջարկվել է ստորագրել հսկիչ գնմանն առնչվող փաստաթղթերը: Սակայն, Արսեն Գևորգյանը հրաժարվել է որևէ փաստաթուղթ ստորագրելուց՝ պատճառաբանելով, որ նման լիազորությամբ օժտված չէ:

Հանձնաժողովի համոզմամբ, հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողները ներկայացրել են ծառայողական

վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 19:43-ին ՀԴՄ-ից դուրս են բերել Z հաշվետվությունը 2740 դրամ ընդհանուր գումարով (որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել), ՀԴՄ չմուտքագրված գումարը ժամը 19:44-ին մուտքագրել են ՀԴՄ և ժամը 19:44-ին ՀԴՄ-ով ձևակերպել են 700 դրամի վերադարձը:

Բացի այդ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները, որի վերաբերյալ 10.07.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման թիվ 6201892 ակտը: Սակայն, վաճառող Մայիս Գևորգյանը հրաժարվել է հետընդունման ակտը ստորագրելուց և ապրանքները հետ ընդունելուց պատճառաբանելով, որ վաճառված դեղորայքը չի կարող վերադարձվել:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտված լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 04.08.2014 թ-ի թիվ 6102271 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Կ.ՄԻՐՈՒՄՅԱՆ